

148

ԱՆ ԻՍԶ ԼՈՒԺՈՂԿՈՄԱՏ

## ԾՐԱԳԻՐ

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ-ԲՆԱԳԻՏԱԿԱՆ  
ԽՄԲԱԿՆԵՐԻ

5  
8-98

ԼՈՒԺԲՈՏ

ՅԵՐԵՎԱՆ

1939

148

13 MAY 2005

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՈԶ ԼՈՒՍԴՈՂԿՈՄԱՏ

5  
5-98

ԿՐ

ԾՐԱԳԻՐ

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ-ԲՆԱԳԻՏԱԿԱՆ  
ԽՄԲԱԿՆԵՐԻ

ԼՈՒՍԴՐԱՑ

ՅԵՐԵՎԱՆ

1959 թ.

148

14.05.2013

04 MAY 2010

## Կազմեց՝ Ս. Զիջիշան Խմբագիր՝ Ս. Մովսիսյան

ԾՐԱԳԻՐ

## ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ

Բնությունն ուսումնասիրող (արտադասարտնական) խմբակները հսկայական գործ են կատարում բնությունը և մեր յերկրի բնական հարստությունները հետազոտելու ուղղությամբ։ Արտադասարանային աշխատանքը ճիշտ դնելու և լավ զեկավարելու գեպքում մեծ ոգնություն կարող են ստանալ նաև դպրոցն ու ուսուցչությունը՝ ուսումնադաստիարակչական աշխատանքները կարգավորելու, ինչպես և յերեխաների կուլտուրական ժամանցը կազմակերպելու տեսակետից։ Ինչպես արտադասարանական մյուս խմբակները, նույնպես և բնությունն ուսումնասիրող խմբակները նպաստում են գպրոցի աշխատանքի վորակի բարձրացմանը, զարգացնում են աշակերտների դիտողությունը, ձեռներեցությունը, հետաքրքրությունը գեպի բնությունը։ Ապահովում են յերեխաների մասնակցությունը սոցիալիստական շինարարության պրակտիկ աշխատանքներում և հանդիսանում են պատանիներին կոմունիստական զաստիարակություն տալու կամեպորագույն միջոցներից մեկրէ։

Արտադասարանական խմբակի աշխատանքի պլա-

Սբբագրիչ Մ. ՀԱՅԻԱԶԱՐՅԱՆ  
Կնարող սբբագրիչ Ա. ՔԱԼՍՅԱՆ  
Գլավիտի փառոր Ն. 2822  
Պատճեր № 109, տիրած 1500.



9108  
39

նը դպրոցի բնագիտության ծրագրի պատճեն չպետք է լինի, այլ պետք ե ոգնի աշակերտներին լայնացնելու, խորացնելու դպրոցում ձեռք բերած գիտությունը, բավարարելու աշակերտների բազմակողմանի հարցերին, ստեղծելու հետաքրքրություն դեպի բնությունն ուսումնասիրելու գործը և այդ ուսումնասիրությունը կապելու սոց. շինարարության հետ, ոգնելու աշակերտներին մատերիալիստական և հակակրօնական աշխարհայացք ձեռք բերելու:

Բնագիտական արտադպրոցական խմբակը հանդիսանում ե բնությունն ուսումնասիրելու նպատակով ստեղծված յերեխաների կամավոր համախմբում, ուստի այդպիսի խմբակների կազմակերպման ժամանակ, անհրաժեշտ ե ապահովել խմբակներում անդամագրելու կամավոր սկզբունքը, խուսափելով ձևական ցուցակագրությունից:

Խմբակը բազմամարդ չպետք ե լինի. Խմբակը լավ զեկավարելու և նրա բոլոր անդամներին խմբակի աշխատանքներին ակտիվ կերպով մասնակից դարձնելու համար նպատակահարմար ե, վոր խմբակի անդամների թիվը 15—20-ից չանցնի:

Փորձը ցույց ե տվել, վոր խմբակի աշխատանքներն ընթանում են ավելի հաջող և արդյունավետ, յերբ այդ խմբակը զեկավարում ե այն ուսուցիչը, վորը պարապում ե այդ աշակերտների հետ և ճանաչում ե իր բոլոր սովորողներին, գիտե նրանց պատրաստության աստիճանը և հետաքրքրությունները:

Դրանից յենելով՝ խմբակների ծրագիրը կազմելու ժամանակ անհրաժեշտ ե հաշվի առնել.

1. Յերեխաների հետաքրքրությունը.  
2. Նրանց տարիքային առանձնահատկությունները.

3. Կրթական մակարդակը.  
4. Գործնական աշխատանքի բազայի (կենդանի անկյուն, ծաղկանոց, փորձի դաշտ, շրջապատող բնությունը և այլն) առկայությունը:

5. Ղեկավարության ապահովումը.

Բնագիտական յուրաքանչյուր խմբակ, կազմելով իր աշխատանքի պլանը՝ անհրաժեշտությունն նրա մեջ պետք ե նշի առանձին պարապմունքների բովանդակությունն ու մեթոդները, թեմաների բաշխումն առանձին ողակների՝ բնասերների միջև, ինչպես և հաշվի առնի աշխատանքի վայրն ու անհրաժեշտ կահավորումը:

Խմբակի աշխատանքի պլանում պետք ե լինեն բազմազան թեմաներ, ինչպես կենդանի բնությունից, այնպես ել «անկենդան» բնությունից:

Մասսայական դպրոցների պրակտիկայից և յերեխաների հետաքրքրությունից յենելով՝ հնարավոր ե կազմակերպել հետեւյալ խմբակները՝ կենդանական, բուսաբանական, դարվինիզմի, յերկրաբանական և այլն:

Խմբակի աշխատանքի բովանդակության բազմազանությունը պահանջում ե նաև խմբակի աշխատանքների կազմակերպման մեթոդների բազմազանություն ու ձևուն ձևեր:

Համ. Կ(բ)կ կենտկոմի ցուցումը՝ ուսումնական աշխատանքներում տարբեր մեթոդներ կիրառելու մասին վերաբերում ե նաև արտագաւարանային պարապւունքներին:

Խմբակի աշխատանքներում պետք է կիրառել՝  
եքսկուրսիաներ, ինքնուրույն դիտողություններ, փոր-  
ձեր, գործնական աշխատանքներ, իսկ բարձր զասա-  
րանների աշակերտներից կազմված խմբակում հնարա-  
վոր և գործադրել նաև զեկուցումներ ու ռեֆերատներ՝  
կատարած դիտողությունների ու կարգացած դրակա-  
նության շուրջը:

Խմբակի աշխատանքներում պետք է գործադրել  
այնպիսի մեթոդներ, վորոնք ապահովեն՝

1. Առավելագույն հետաքրքրություն.
2. Շահագրգուական ակտիվություն.
3. Դիտողականություն.

4. Ինքնուրույն աշխատանքային ունակություն-  
ների զարգացում.

5. Գյուտարարություն և ստեղծագործական նա-  
խաձեռնություն:

6. Փորձնական հետազոտական աշխատանքների  
նախական ունակությունների ձեռք բերում և այլն:

Խմբակի աշխատանքում խոշոր նշանակություն  
ունի աշխատանքի հաշվառումը. այդ բարձրացնում և  
կատարված աշխատանքի նկատմամբ պատասխանա-  
տվության զգացումը, ապահովում և գործի պլանայնու-  
թյունը, խթանում և աշխատանքի վորակի բարձրաց-  
ման գործը: Առանց ճիշտ ու լրիվ հաշվառման լուրջ  
գործ կատարել, մասնավանդ լուրջ հետեւություններ  
անել կամ արդյունքներն ամփոփել, հնարավոր չե-  
չաշվառումը սովորաբար տարվում և համախմբակային  
կամ անհատական որագրերում:

Անհրաժեշտ և ունենալ նաև զրանցումների և  
նկարների որագրեր, պատրաստել հերթարիում, կոլեկ-

ցիաներ, աղյուսակներ, ալբոմներ, մակետներ, մոդելներ  
և այլն:

### ԲՈՒԽԱԲԱՆՆԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԹԵՄԱՆԵՐ Գարնանային—տմառային օրգան

Գարնանային բույսերի գեղորգիական առանձնա-  
հատկությունները կապված տվյալ միջավայրի պայ-  
մանների հետ: Բույսերի նկարագրությունը: Դիտում-  
ներ և զրանցումներ գարնանային բույսերի աճման  
վերաբերյալ (զրանցումները կատարվում են վեցորյա-  
կում մեկ անգամ): Գծագրել տեսակների զարգացման  
համեմատական կորագիծը: Վար որգաններն են ձմեռում  
և ինչ խորությամբ: Գարնանային բույսերի հերթա-  
րիզացիան (կազմել հերթարիում գարնանային բույսե-  
րեց):

Դիտել պտղատու ծառերի և թփերի աճը (փոշո-  
տումից հետո նրանց պտուղ բռնելը) և պտղատվու-  
թյան բնույթը: Ծառերի ձմռան ցրտին և հիմանդրու-  
թյուններին դիմանալու բնորոշումը:

Թփային պտուղների կուլտուրայի առանձնա-  
հատկությունները: Ծանոթանալ յելակի, մորի (մալի-  
նայի) և նման պտուղների կուլտուրայի առանձնա-  
հատկություններին: Դիտել նրանց զարգացումը: Անց-  
կացնել հողամասի վրա տարվելիք բոլոր հիմնական  
աշխատանքները (թփերի տնկելը և նրանց խնամելը):  
Անցկացնել ֆենոլոգիկ գիտումներ, բերքի հաշվառում  
և պտղի նկարագրություն: Հիմանդրությունների և  
ցրտի դիմացկում տեսակների հաշվառում:

Ուսումնասիրել գլորոցի շրջապատի տեղական

պտղաբուծությունը, պտղատու ծառերի և թփերի  
տեսակները՝ նրանց կազմությունը պարզելու համար:  
Հետազոտել տվյալ շրջանի վայրի պտղատու  
բույսերը: Հաշվի առնել վայրի պտղատու բույսերի  
մասսիվը՝ տնտեսական ոգտագործման, բերքատվու-  
թյան բարձրացման, վորակը լավացնելու և այլ նպա-  
տակով: Հայտնաբերել տվյալ շրջանում պտղատու  
բույսերի նոր տեսակներ:

Փորձնական աշխատանքներ դպրոցին կից բան-  
ջարանոցում, տարբեր տեսակի պարարտանյութերի  
աղղեցությունը բերքատվության վրա, բույսերի խո-  
րությունն ու խտությունը: Դիտել բույսի զարգա-  
ցումը: Ցանքսի ժամկետների աղղեցության ուսումնա-  
սիրությունը: Կարտոֆիլ ցանելու տարբեր ձեերը:  
Սերմի անմաքրության աղղեցությունը բերքատվու-  
թյան վրա:

Փորձնական աշխատանք դաշտավարությունից.  
Գյուղատնտեսական կուլտուրաների աճման ամենալավ  
պայմանները պարզող փորձել: Պարարտացման աղղե-  
ցությունը—մօխրի աղղեցությունը բերքի վրա (կար-  
տոֆիլի, կտավատի, արմատապտուղների և այլն): Հան-  
քային պարարտանյութերի աղղեցությունը հիմնական  
կուլտուրաների վրա: Փորձեր՝ ցանելու և տնկելու:  
Տարբեր խորությունների աղղեցությունը կարտոֆիլի  
և յեղիսլացորենի ցանքսի վրա: Կարտոֆիլի ցանքսն  
ամենիկական յեղանակով: Աճման կարգավորությունն  
ու բույսի զարգացումը: Աշնանային կուլտուրաների  
(ցորեն, տարեկան) սերմերի յարովիզացիան: Կարտո-  
ֆիլի յարովիզացիան (գարնայնացումը):

Բույսերի հերբարիզացիան ըստ նրանց ընտանիք-  
ների և սիստեմատիկ խմբերի:

Մոլախոտերի կենսաբանական առանձնահատկու-  
թյունների ուսումնասիրությունը: Սերմերի արտաքին  
կազմության ուսումնասիրությունը, սերմը նկարել խո-  
շորացրած (միկրոսկոպով): Դիտել բույսի աճի արագու-  
թյունը (ծելուց սկսած մինչև սերմ տալը): Կենսաբա-  
նական նկարագրություններ: Պարզել թե ինչպիսի մո-  
լախոտեր են աճում կուլտուրական բույսերի հետ միա-  
սին: Հստ կուլտուրաների բնորոշել ամենատարածված  
մոլախոտերը: Պայքար մոլախոտերի դեմ:

Թունավոր և ուտելու սնկեր: Մնկի տեսակների հա-  
վաքեն ու կոլեկցիաներ կազմելը: Մնկի առանձին տե-  
սակների ներկայացուցիչների նկարագրությունը: Աճ-  
ման պայմաններն ու զարգացումը:

### ԱԾԽԱՅԱՅԻՆ—ՃԱՄՌՈՋԱՅԻՆ ՇՐՋԱՆ

1. Բույսերի աշնանային կյանքի դիտումներ: Բույ-  
սերի նախապատրաստումը ձմռան ցրտերից: Բազմա-  
մյա բույսերի ձմեռող մասը: Զմեռող բույսերի կենսա-  
կան առանձնահատկությունները: Տերևաթափ: Արտա-  
քին փոփոխությունների դիտումը:

ա) Դիտել բնության մեջ կատարվող աշնանային  
յերեվույթները, տարբեր տեսակ ծառերի և թփերի  
տերեկաթափը, չփողթոչուններ (սարյակ, ծիծենակ և  
այլն): Զմեռային թռչուններ:

բ) Զյան ծածկույթի հաստության և ամրության  
չափումը դաշտում և անտառում (չափումն անց է կաց-  
վում մի քանի անգամ նույն տեղում):

## 2. Սենյակում ծաղկաբաւծության

Սենյակում պահվող բույսերի կոլլեկցիա կազմելը։  
Ծանոթացում բույսերի տնկելու, խնամելու, ջրելու և  
բազմացնելու աշխատանքներին։ Դիտելու ծրագրի մեջ  
կարող են մտնել հետեւյալ հարցերը՝

1. Բույսերի ընդհանուր նկարագրությունը.

2. Բազմացումը.

3. Բույսի զարգացումը.

4. Պարզել տարբեր բույսերի զարգացման համար  
ամենալավ պայմանները (մոռնդ, խնամք)։ Ցանկալի յէ  
կազմակերպել սենյակային բույսերի ցուցահանդես։

## 3. Արմատապուղմերի զարգացման դիտումը

կենդանի տնկյանում

Արմատապուղմերը տնկում են ծաղկամանի մեջ  
և դնում լուսավոր պատուհանում։ Կարելի յէ դիտել  
բույսի զարգացումը, ծաղկումն ու պտղատվությունը։  
Անհրաժեշտ է դիտման ժամանակ նկարել զարգացման  
շրջանները։

## 4. Բաւյերի տնում

Վարունդ, սալաթ (ջերմոցում)

## 5. Աօխատանիներ դաշտավառության զծով

Տվյալ փորձագաշտի հողի ուսումնասիրություն։  
ա) Վորոշել հողի կազմությունը, լուծվող նյութերը, որպանական, հանքային, նրանց քանակությունը  
հողի տարբեր շերտերում։

բ) Վորոշել հողի թթվությունը։

գ) Աշխատանք կարտոֆիլի հետ, պալարների ու  
սումնասիրություն։

Ուլայի արտադրությունը, վորոշել ուլայի պա-  
րունակությունը պալարների մեջ։

## 6. Աօխատանիների սերմերի հետ

Այն կուլտուրաների սերմերի ուսումնասիրությունը,  
վորոնց հետ պետք է անցկացնել փորձնական աշ-  
խատանքներ կենդանի անկյունում և համապատասխան  
հողամասերում։ Հետազոտել սերմի արտաքին կազմու-  
թյունը (նկարել խոշորացրած ձեռվ) տարբերել սերմե-  
րը պտղուղներից։ Ուսումնասիրել ծիլերի և սերմերի  
բնույթ կրող նշանները. վորոշել ծլունակության տո-  
կուլությունը

## 7. Ծառերի և թփերի ուսումնասիրությանը

Դիտել գաղաթային բողբոջի զարգացումը. վորո-  
շել ծառի տարիքը։

## ՄԻԶՈՒՐԻՆՅԱՆ ԽՄԲԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱ- ԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բացատրել սելեկցիոն աշխատանքի նշանակու-  
թյունը և խնդիրներ գյուղատնտեսության մեջ։

2. Տեսականում և գործնականում ուսումնասիրել  
Միչուրինի մեթոդները բոյսերի նոր տեսակներ ստանա-  
լու համար։

3. Ծանոթանալ Միչուրինի ստեղծած լավագույն  
տեսակի պտղուղների հետ։

4. Դպրոցի հողամասում ծավալել սելեկցիոն աշխատանքներ՝ պառադների, հացահատիկի միջուրինյան ահսակներն ուսումնասիրելու համար:

5. Կոլանտեսություններում մտցնել խմբակի փորձերի հետեւանքով՝ ստացված միջուրինյան ըույսերի նոր ահսակներ:

6. Տվյալ շրջանում կազմակերպել սիստեմատիկ ուսումնասիրություն վայրի բնության մեջ, հին այգիներում և պրոլակներում:

7. Ուսումնասիրել պառադների ագրոտեխնիկական և այգեգործության զրությունը տվյալ շրջանում:

8. Կազմակերպել կոլխոզային ակտիվ Միջուրինի աշխատանքների մեթոդները մասսայորեն կյանքում կենսագործելու համար:

9. Խմբակի անդամներին ծանոթացնել լիսենկոյի Ցիցինի և ԽՍՀՄ-ի այլ սելեկցիոնների նշանավոր աշխատությունների հետ:

10. Հաստապտղային տնտեսության նշանակությունը Խորհրդային Միության համար:

11. Ի՞նչ պահանջներ են առաջարկում սելեկցիոն աշխատանքները մեր խոշոր սոցիալիստական գյուղատնտեսության բնագավառում:

12. Յարովիզացիայի նշանակությունը սելեկցիոն աշխատանքներում:

13. Ցորենի, կանեփի, կարտոֆիլի, պամիրորի, խըն ձորի, մորու (մալինայի) ծաղիկների ուսումնասիրությունը և այլ ըույսերի արհեստական փոշոտման տեխնիկան:

14. Միջուրինի կենսագորությունը.

15. Միջուրինի ձեռք բերած ավելի նշանավոր տեխ-

սակները և վերջիններիս առավելությունները հների հետ համեմատած:

16. Տանձենու և խնձորենու տնկելու ժամանակը և տեխնիկան:

17. Պառադների վեգետատիվ բազմացման տեխնիկան:

18. Պատվաստման ավելի տարածված միջոցները և տեխնիկան:

19. Ուսումնասիրվող բույսի նշանակությունը:

20. Բուծելու տեխնիկան:

ԶԵԿՈՒՅՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՏԱԼ ՆԱՅԵՎ  
ՀԵՏԵՎՅԱԼ ԹԵՄԱՆԵՐԸ

1. Ի՞նչպես և առաջացել բուսական աշխարհը, այլուստական աշխարհի բազմազանությունը. բ) Ի՞նչպես են բացատրում բուսական աշխարհի բազմազանությունը գիտությունը և կրոնը:

2. Ի՞նչպես են առաջացել կուլտուրական բույսերը:

3. Կ. Ա. Տիմիրյաղեվը, նրա կենսագրությունը և ուսմունքը:

4. Հեղափոխական գիտնական Կ. Ա. Տիմիրյաղեվը և խորհրդային իշխանությունը:

5. Զարդ Դարվինը, նրա կյանքն ու ուսմունքը:

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿԻ ԹԵՄԱՆԵՐԸ

Գարնանային—ամառային շրջան

1. Գիտել կենդանիների գարնանային—ամառային

կյանքի յերեվութները բնության մեջ և կենդանի անկյունում:

2. Դիտել թռչունների կյանքը գարնանը, թռչունների վերապարձը տաք յերկրներից, բներ շնուր և ձագեր համելը, ձագերի կերակրումը մայրերի կողմից, սննդի տեսակը, քանակը և այլն: Թռչուններին ձայներից ճանաչելը, նրանց յերգը: Վնասակար և ոդտակար թռչուններ:

3. Թռչունների տարբեր տեսակների բիոլոգիական առանձնահատկությունները: Տվյալ շրջանի կամ վայրի թռչունների տեսակների հաշվառումը և կլասիֆիկացիան:

4. «Թռչնի որվա» կազմակերպումը: Թռչնատների և արենատական բների կառուցումը, Թռչունների պահպանության միջոցառությունը (գիշատիչներից, կատուներից): Առանձին թռչունների որվա կյանքի դիտությունները և ուսումնասիրությունը:

5. Միջատների աշխարհի աստիճանական դարձնումը, առանձին տեսակների զարթնումը՝ ճանճեր, սարգեր, թիթեռներ, մոծակներ, բղեգներ և այլն: Բղեցների բազմազանությունը և նրանց հարմարվելը շրջապատի կյանքի պայմաններին (արագաշարժություն, դիմակավորում, սպասնացող գույն և այլն):

Միջատների տեսակները և գոյության կոիվը:

6. Անառոի, այգու, դաշտի, արտի, բանջարանոցի, պուրակի և պարտեզի ուսումնասիրությունն իրենց վասարականի պարտեզի (գնայուկներ, փոքրիկ բղեցներ, փայտղիներ, պտղակեր, կաղամբաճիճու, կաղամբաճան և այլն):

7. Պայքար այգու և բանջարանոցի գյուղատնտե-

սական վնասատունների դեմ, պայքարի տեխնիկան և միջոցները:

8. Փորձեր և գիտություններ կենդանի անկյունում: Միջատների ձվերն և բազմացումը: Ջրավագանների բնակիչները: Փափկամորթներ, նրանց ձվերի ընդհանուր քանակությունն ամբողջ տարում: Զկների տեսակները, նրանց աճումն ու զարգացումը: Գորտերի կերպարանափոխության տարբեր ստաղիաները: լույսի և ջերմության ազդեցությունը նրանց հասունացման գործում:

9. Թռչունների տարբեր տեսակի ընտելացումը. վորտ տեսակներն են արագ կամ ուշ ընտելանում: Աշխատանք ձագուկների հետ (ագռավ, սոխակ, թութակ, ծիծեռնակ և այլն): Արույի և եղի բնավորության տարբերությունը:

10. Տարբեր կենդանիների սիստեմատիկայի կորեկցիաներ կազմելը՝ նպատակ ունենալով տեղական ֆառնայի տեսակները վրոշելը:

11. Աշխատանք՝ աղավնաբուծության գծով: Տարբեր տեսակների խաչաձևումը: Զագուկների ինսամքը, վարժեցումը:

12. Աշխատանք՝ տնային, մերձ դպրոցական թըռչնատներում:

13. Աշխատանք՝ ձագարաբուծարանում:

Աօնանալին—ձմեռային օրջան

1. Կենդանի անկյան համար նյութեր հավաքել և մշակել (հիդրաներ, վորդեր, փափկամորթներ, հողվածոտանիներ, միջատներ, ձկներ, յերկինցաղներ, սուզուններ):

2. Պատրաստել պրեպարատներ և կոլեկցիաներ կենդանաբանության գծով:

3. Կենդանի անկյուն կազմակերպել: Վայրի կենդանիներ ընտելացնել: Կենդանիներ բազմացնել կենդանի անկյունում: Ռեգեներացիա (վորդի, մողեսի, հիգրաների վերաբերյալ):

4. Կենդանիների աշնանային կյանքի յերեվություների դիտումը: Կենդանիների ձմեռելու նախապատրաստությունը: Զմռան դիմավորելու տարրեր յեղանակները տարրեր կենդանիների մոտ (մազաթափում, մազի հաստ շերտի աճում, կերի պաշարի հավաքելը, ձմռային քուն և այլն):

5. Թոչունների վերադարձը—չուն: Զվելու դիտումը: Յերամների կազմումը, չվելու ուղղությունը, փոքրերի վարժեցումը չվելու համար, անցնելիք մանապարհի յերկարությունը, կայարաններ, ձմեռելու վայրը:

6. Թոչունների կերակրումը—խնամքը ձմռանը: Ի՞նչպես են սնունդ գտնում թոչունները ձմռանը: Զմեռող թոչունների մնաներն ու տված ոգուտը:

7. Թոչուններին գարնանը դիմավորելու նախապատրաստական աշխատանք: Սարյակների բների նորոգելը, նոր բներ շինելը, փչակներ կարգավորելը և այլն:

8. Տվյալ շրջանի կենդանիների ու գազանների ուսումնասիրությունը հետքերով: Վայրի կենդանու վորոշելը (ձյան վրա թողած հետքերով) թաթերի հեռավորությունը, ճանկերի ուղղությունը, հետքի խորությունը, մատների պատկերը և այլն):

9. Մարդկային կենցաղում գոյություն ունեցող

պարագիաների ուսումնասիրությունը և նրանց գեմպայքարելու միջոցները:

Փայտոջիլի և ուտիճի արտաքին համեմատումը: Ինչով են սնվում նրանք, բացի մարդկային արյունից, ինչքան ժամանակ կարող են քաղցած մնալ: Նրանց բազմացման ձևերն ու արագությունը: Կիմայի աղցեցությունը նրանց աճման վրա. Ինչ ջերմության տակ են նրանք մեռնում, նրանց վոչնչացնելու լավագույն միջոցները:

10. Աշխատանք աղավնաբուծության գծով: Ցնային աղավնիների տեսակները: Նրանց նշանակությունը: Փոստատար աղավնիներ, նրանց պատմությունը: Փոստատար և սովորական աղավնու տարրերությունը: Փոստատար աղավնու բազմացումը, պահպանումն ու խնամքը:

11. Ի՞նչպես կազմակերպել թոչնատներն ու թրոչնանոցները: Ծանոթություն ինկուբատորի կառուցվածքի հետ: Զագերին ինսամելու ձևերը: Հավերի տեսակներն ու նրա տարածման պատմությունը: Հավի ու թոչնաբուծության տնտեսական նշանակությունը: Հավի կազմությունը:

12. Աշխատանք՝ ճագարաբուծաբանում (ճագարանոցում) ճագարաբուծման գորնանային—ամառային աշխատանքի արդյունքների ամփոփումը: Աղնվացեղի և առողջ ճագարների ընտրությունը (յերիտասարդներից) հաջորդ տարվա բազմացման համար: Կերի պաշարը և տեսակները: Կերի նորմաների վորոշումը:

Ծանոթություն նրանց հիվանդությունների մասին:

Գարնանային կամպանիայի պատրաստումը: Եղերի և արուների դասավորումը, դուգավորման որա-

ցույց, ձագերի տեղի պլատրաստումը և այլն: Կենդանիների ձմեռային քունը:

ԶԵԿՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՈԳՏԱԳՈՐԾԵԼ  
ՀԵՏԵՎՅԱԼ ԹԵՄԱՆԵՐԸ

1. Ողտակար և փասակար կենդանիներ.

2. Գիտությունն ինչպես խորտակեց աստծու աշխարհն ստեղծելու առասպելը.

3. Գիտություն՝ կենդանական աշխարհի պատմությունը.

4. Կենդանական աշխարհի պատմությունը.

5. Զ. Դարվինի կյանքն ու ուսմունքը:

ԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿԻ ՊԱՐԱԳ-  
ԱՌԻՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Պարբենային—ամառային օրջան:

1. Որդանական աշխարհի բաղմաղանության նմուշներ:

2. Մողիթիկացիաների (ձևափառաբարեների) ստացմբ: Աշխատանք փորձադաշտերում ա) Տոմատի աճման կարգավորում. բ) բույսերի ցանքմն ու տնկումը: գ) բնական պայմաններում ձևափոխված զանազան բույսերի ընտրությունն ու հերբարիզացիան:

3. Սօրերի ընթարքուն ու նրանց նմանաների հերթակցացիան: Փոփոխակների տեսությունը (Դարվին, Լինկո Միչուրին և ուրիշները):

4. Կարտոֆիլի յարովիզացիան:

5. Խաչաձեռամ կենդանիների և բույսերի: (Որիշակերի ձագարների: Սովորական կամ ձեավոր դղումների մի քանի պարզ, սակայն հետաքրքիր կոմքինացիաներ):

6. Կուլտուրական բույսերի տարրեր սելեկցիոն տեսակների փորձարկումը (կարելի յե նույն չափի մարգերում, նույնատեսակ հողամասում ցանել պամիգորի, վարունգի, մորու տարրեր տեսակներ և վորոշել յուրաքանչյուր տեսակի հասունացման ժամկետը, բերքատվության չափը և ցրտակայունությունը:

7. Վայրի մորու վրա փորձել վեգետատիվ բաղմացման ինտենսիվությունը:

8. «Դարվինյան հրապարակ» կազմակերպելը:

9. Եքսկուրսիա դեպի տնկարան և անտառ՝ դիտելու համար բույսերի մեջ տեղի ունեցող բնական ընտրության և գոյության կովի արդյունքները:

Դեպի անտառ կազմակերպել եքսկուրսիաներ և հավաքած նյութերը մշակելուց հետո հանել հետեւյալ յեղրակացությունները՝

ա) Գոյության կորվը, վորպես անտառային «համակեցության» զարգացման հիմնական փակուր:

բ) Անտառի ձևավորման հիմնական պրոցեսները, բնի ձևավորումը և կազմակերպումը, ծառերի առանձին խմբերի բաժանումները, պտղաբերության պրոցեսը և այլն, վորպես բնական տնտեսության արդյունք:

գ) Տնտեսական տեսակետից ծառերի լիարժեք տեսակների ձևակերպումը հնարավոր և միայն «համակեցության» ներսում:

դ) Բուսական որդանիզմների հարսարվելը, վոր-

պես հետևանք պատմականորեն ազդող բնական ընտրության:

12. Գոյության կոփիլ ու բնական ընտրությունն անապատների, արոտների և ճահճների բուսականության մեջ:

13. Կյանքը ծառի կոճղի վրա, նրա բնակիչների հարաբերական հարմարվելը միջավայրի պայմաններին:

14. Որգանիզմների հարաբերական հարմարվելը միջավայրին, դիառղություն և ուսումնասիրություն բուսաբանական և կենդանաբանական այգիներում:

15. Միջատների բիոլոգիական տիպերի ձևի և գույնի դերը միջատների կյանքում (նախապահպանողական, նախադպուշական և այլն):

16. Գոյության կովի ու արհեստական ընտրության ընթացքի փոփոխությունը կապված մարդկանց տնտեսական գործունեյության հետ:

Որինակ՝ կենդանական ու բուսական աշխարհի բնույթը չորացած և չչորացած ճահճային վայրում:

17. Գոյության համար ամենից լավ հարմարված բույսերի ընտրությունը:

18. Եվոլյուցիայի պրոցեսը հաստատող տվյալներ (մորֆոլոգիայի ու սաղմարանության բնագավառներից վերցրած փաստեր):

Անանալին—ձմեռային օրջան

1. Սորտեր ստանալու:

ա) Տրադիսկանցիան վերածել ցամաքային—ջրային ձերի (ապակյա անոթի մեջ խոնագի հողի վրա պահել և պուլվերիզատորով որվա մեջ 2 անգամ 3-4 շաբաթից ջրել: Անոթը պետք է ծածկել ապակիով: 4 շաբաթից հետո բույսը տեղափոխել ակվարիում: Նորմալ միջավայրում, խոնագի կամերայում և վերջապես ջրի մեջ աճող բույսերն իրար հետ համեմատելու համար, աշակերտները տերևների վրա կատարում են մի կրոսկոպիկական հետազոտություն:

բ) Սպիտակ առնետներին և մկներին աճեցնել տաք և խոնագի շենքերում: Նրանց մազի յերկարությունը յերկու տարբեր վայրերում:

2. Գոյության կոփիլը բորբոսների մեջ (փորձեր լաբարատորիայում):

3. Գոյության կոփիլն արկղներում՝ տարբեր խտությամբ ցանված ծիլերի մեջ:

4. Պաստյորի փորձերը. մննդաբույսերի և հավի սպիտակուցի ստերիլիզացիան (տարբական յեղանակով):

5. Կենդանիների և բույսերի փոխհարաբերությունը բնությունից չեղոքացված անկյուններում, ակվարիումները ջրային բույսերով և կենդանիներով (ցիկլոպ, հիդրա, դաֆնիա և այլն):

6. Զիների տարբեր տեսակների մարմինի գույնի փոփոխության աստիճանը կախված շրջապատի գույնից նից (ակվարիումի անոթները ծածկել տարբեր գույնի ծիախոտի թղթերով):

7. Դիտումն այնպիսի կենդանիների ու բույսերի, վորոնք գոյության պայմաններին հարմարվելու վառ որինակներ են (ջրային միջատներ և թթվուրներ, չոր ավագուտների և ստվերախիտ անտառների բույսեր):

8. *Փոփոխականության ու ժառանգականության որենքները և արհեստական ընտրություն:*

9. Այս խմբակում կարելի յէ զեկուցումներ կարդալ նետելյալ թեմաների շուրջը՝ «Մարդու ծագումը», «Դարվինիզմի նշանակությունն որգանական աշխարհի զարգացումը պարզելու հարցում», «Դարվինիզմը և կրոնը», «Դարվինի կյանքը», «Դարվինիզմ և Մարքուֆիզմ», «Բնական ընտրություն» և այլն:

10. *Դպրոցում, պիոներական ակումբում եվոլյուցիոն տեսության հարցերի շուրջը կարելի յէ կազմակերպել հարց ու պատասխանի յերեկոներ (հարցերը դցում են նախորդոք պատրաստված ու փակցրած արկղի մեջ):*

11. *Կազմակերպել կենդանի անկյուն, ջերմոց, տնկարան, բնագիտական կարինետի եքսպոնատների համալրում՝ խմբակի անդամների ուժերով և նրանց ինքնաշխն պարագաներով:*

---

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԿ

- В. Лункевич—«Шелковичный червь».  
П. Барто—«Поход за змеями».  
Н. Н. Миклухо-Маклай—«Путешествия».  
Б. А. Зенькович—«Вокруг света за китами».  
Поль-де-Крюи—«Борьба со смертью».  
Чарльз Г. Штернберг—«Жизнь охотника за ископаемыми».  
М. Гольдин—«Жизнь невидимых».  
О. Перовская—«Ребята и зверята».  
Анри фабр—«Шестиногие».  
Ю. П. Фролов—«Мон встречи с животными».  
А. В. Цингер—«Занимательная ботаника».  
Н. Н. Плавильщиков—«Чарльз Дарвин».  
Поль де Крюи—«Охотники за микробами».  
А. Н. Формозов—«Спутник следопыта».  
Вячеслав Лебедев—«Обновитель садов».  
К. Кочетков—«И. В. Мичурин».  
А. Югов—«К. А. Тимирязев».  
С. Готовский—«Академик Лысенко и его научные открытия».  
Ш. Нюренберг—«Отступление тундры».  
«Биология в школе» 1937 г. № 6 Л. А. Самойлова—  
Работа кружка юных натуралистов.  
«Биология в школе» 1938 г. № 2 К. Н. Соколов—  
Краеведческая работа кружка юных натуралистов.  
«Биология в школе» 1937 г. № 5 1) XX годовщина

Великой Октябрьской Социалистической революции. 2) Письмо И. В. Мичурина И. В. Сталину. 3) Доцент А. С. Томаринцев—Великий преобразитель природы Иван Владимирович Мичурин. 4) И. Е. Глущенко—Ученый из народа—Т. Д. Лысенко.

*Работа Кружков юных натуралистов.*

*Н. А. Рыков*—Из опыта работы кружка юных натуралистов.

*Е. Аврамов*—О школьном музее местной природы

*Л. Самойлова*—Белка в живом уголке.

*М. Я. Цузмер, А. А. Парамонов и Н. Н. Плавильщиков*—«Наука о животных и религия».

*Б. В. Всесятский, В. Н. Вучетич, И. В. Козырь*—«Наука о растениях и религия».

*Елачич*—«Происхождение видов».

*Долаж и Гольдсмат*—«Теория эволюции».

*Дарвин Ч.*—«Происхождение человека и половой подбор».

*Ч. Дарвин*—«Автобиография».

*Еразм Дарвин*—«Храм природы».

*Нr. Գարդիլյան*—«Զարգ Դարվին».

*Զ. Գարվին*—«Տեսակների ծագումը».

*Բարանյան*—«Դարվինիզմ».

*Բեոլցե*—«Մարգու ծագումը».

*Ա. Գարդիլյան*—«Միջատակներ բույսեր».

*Նլաշիչ Յեվգ.—«Կենդանական և բուսական աշխարհների փոխարարելությունը».*

*Ֆ. Ենգելս*—«Աշխատանքի դերը կապի մարդացման պրոցեսում».

*Պրժ. Պ. Յու. Շմիդտ*—«Մեր ընտանի կենդանիները և նրանց պատմությունը».

*Լ. Վ. Կանելի*—«Ի՞նչպես և առաջացել մարդը յերկը վրա».

*Տիմիրյագին*—«Զարգ Դարվինի կյանքը և ուսմունքը».

*Վ. Լունկինի*—«Հերակլիտից մինչև Դարվին».

*Դանեման*—«Բնագիտության պատմությունը».

«Ազգային գրադարան



NL0257089

148

ԳԻՆԵ 40 ԿՈՊԵԿ